

# ԽՉԽՉԱՆ ԱՎԱԼԱՐ

Տավարի ոչ կոնտագիոզ հիվանդություն է, որը բնորոշ է մկաններում արագ մեծացող խՉԽՉացող այտուցների առաջացմամբ, տենդով և անկման բարձր տոկոսով: Տավարը զգայունակ է 3 ամսականից մինչև 4 տարեկան հասակը: Ավելի հազվադեպ հիվանդանում են ոչխարները և այծերը: Հիվանդության դեպքերը մեծ մասամբ արձանագրվում են ամռանը, երբ շփվում են արոտավայրի հետ:

## Վարակումը

ԽՉԽՉան պալար հիվանդությունն առաջանում է Կլոստրիդիում Շավոե մանրէի կենսագործունեության ընթացքում արտադրված թույնների հետեւանքով: Սա անակերոբ, գրամ դրական ցուպիկ է: Շարժվում են մտրակների օգնությամբ եւ ունեն մոտավորապես 3-8սմ երկարություն եւ 0.5-1սմ լայնություն:

Այլ կլոստրիդիաների կողմից հարուցվող հիվանդություններից են՝ փայտացումը (տետանուս), բոտուլիզմը, էնտերոտքսեմիան, <<Կարմիր ջուր>>-ը (Բակտերիալ հեմոգոբինուրիա) եւ չարորակ այտուցը:

Վարակի աղբյուրը հիվանդ օրգանիզմն է: Վարակվում են ալիմենտար ճանապարհով, երբ կերի, ջրի հետ բակտերիաները և սպորները ընկնում են աղեստամոքսային տրակտ: Չի բացառվում վարակվելը նաև մաշկի և միջատների միջոցով:

## Նշանները

Գաղտնի շրջանը 1-5 օր է: Հիմնական նշաններն են՝ ջերմության խիստ բարձրացումը, ախորժակի անկումը և սրտի գործունեության թուլացումը: Կենդանին կաղում է, մկաններով հարուստ հատվածներում /ազդրի, գավակի, թիակի/ առաջանում են սահմանագծված, սկզբում պինդ, տաք և ցավազգաց այտուցներ /պալարներ/, որոնք տեղադրված են մկանների մեջ: Գազերի կուտակման հետևանքով պալարները շոշափելիս խՉԽՉում են: Պրոցեսն ընթանում է չափազանց արագ և կենդանին սատկում է 1-2 օրվա

ընթացքում: Ոչխարների մոտ ավելի սուր բնույթ ունի: Նրանք սատկում են 6-24 ժամվա ընթացքում:

### **Ախտորոշումը**

Ախտորոշում են կլինիկական, էպիզոտոլոգիական, ախտաանատոմիական և բակտերիոլոգիական հետազոտությունների տվյալների համաձայն: Դիահերձման ժամանակ դիակը փքված է, պալարի հատվածի մաշկը կտրելիս կծված յուղի հոտ ունեցող փրփրախառն հեղուկ է հոսում: Մկանները սև են, սպունգանման և հեշտությամբ պատառոտվում են, լորձաթաղանթների վրա և պարենքիմայն օրգաններում նկատվում են արյունազեղումներ: Բակտերիոլոգիական հետազոտության համար ախտահարված հատվածի էքսուդատից ապակու վրա քսուկներ են պատրաստում կամ ուղարկում են լյարդի, փայծաղի, ախտահարված մկանի կտորներ՝ գլիցերինի 33% լուծույթի մեջ: Անհրաժեշտ է բացասել սիբիրախտը և չարորակ այտուցը:

### **Բուժումը**

Արդյունավետ է հիվանդության սկզբում ներմկանային եղանակով ներարկել 150-200մլ. գերիմուն շիճուկ, օգտագործելով սրտային դեղորայք: Պալարային այտուցի վրա սկզբում սառույց կամ սառը ջրով թրջված շոր են դնում, պալարի շրջապատի մաշկի տակ ներարկում են կալիում պերմանգանատի կամ ջրածնի պերօքսիդի 1-2%-ոց լուծույթներ: Ներմկանային եղանակով 6 ժամը մեկ տալիս են պենիցիլին, բիոմիցին:

### **Միջոցառումները և պրոֆիլակտիկան**

Անապահով տնտեսությունը կարանտինի տակ է վերցվում: Հիվանդ և կասկածելի կենդանիներին մեկուսացնում են և բուժում, իսկ մնացածներին իմունացնում: Ստացիոնար անապահով տնտեսություններում ամեն տարի զարնանը, մինչև արոտ փոխադրելը, կենդանիներին ակտիվ իմունացնում են: Իմունացման ենթակա է 3 ամսականից մինչև 4 տարեկան տավարը: Պատվաստված մատղաշին 6 ամսական հասակում իմունացնում են

երկրորդ անգամ: Կարիքի դեպքում ռեվակցինացիան կատարում են 6 ամիս հետո: Վակցինան ներարկում են մաշկի տակ 2մլ դոզայով: Ոչխարաբուծական տնտեսություններում մանր եղջրավոր անասուններին իմունացնում են 6 ամսական հասակից: Արգելվում է հիվանդներին մորթել: Դիակները այրում են կամ մաշկով թաղում: Կարանտինային սահմանափակումները վերացնում են վերջին դեպքից 14 օր հետո: Վարակված գոմաղբը այրում են, գոմաղբաջրերը վարակազերծում են 1:20 հարաբերությամբ քլորակրով: Անասնաշենքը և առարկաները նախօրոք թրջում են ախտահանիչ լուծույթներով, մաքրում, ապա ախտահանում: Վարակված շենքի ախտահանությունը կրկնում են ամեն օր, իսկ մյուս շենքերինը՝ ամեն մի նոր հիվանդ հայտնաբերելիս և հետագայում՝ 10 օրը մեկ անգամ: Եզրափակիչ ախտահանությունը կատարում են 3 անգամ՝ մեկ ժամ ընդմիջումով: Վերջին ախտահանությունից հետո շենքը 3 ժամով փակում են, ապա՝ օդափոխում: Ախտահանության համար օգտագործում են 5% ակտիվ քլոր պարունակող քլորակրի, 4% ֆորմալդեհիդի, 10% ծծմբակարբոլային խառնուրդի և կծու նատրիումի լուծույթներ: